ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-22/28 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **9 նոյեմբերի 2022թ.**

2022թ-ի նոյեմբերի 4-9-ը ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք հասցեում գտնվող «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ գրատախտակի ձեռքբերման ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-22/28 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լ. Ավետիսյան ՝	Հիմնադրամի տնօրենի տեղակալ՝ տնտեսական գծով,
Ս. Բեյբության՝	Հիմնադրամի պահեստապետ,
Ա. Բաղրամյան՝	Հիմնադրամի գլխավոր հաշվապահի ժ/պ.

Նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Եսայանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Ավետիսյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-22/28 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացրած մասնակցության հայտերի և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

1.ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-22/28 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ և ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լ. Ավետիսյանը նիստը հայտարարեց բացված և հայտնեց տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Աճուրդի մեկնարկային գին	Մեկնարկ	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ

				դրամ)
1	Մարտկոցով հարվածային դռել-պտուտակահան	-	Չկայացած	350000
2	Անկյունահղկիչ մարտկոցով	-	Չկայացած	75000
3	Անկյունահղկիչ	-	Չկայացած	120000
4	Հարվածային դռել	-	Չկայացած	80000
5	Հարվածային դռել	-	Չկայացած	58000
6	Եռակցման սարք	-	Չկայացած	50000
7	Եռակցողի դիմակ	-	Չկայացած	85000

ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-22/28 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացում և բացումը, ինչպես նաև հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-22/28 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց՝

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, և հաստատել ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-22/28 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին համակարգի կողմից գեներացված հայտարարության տեքստը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Ավետիսյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Բեյբության

Ա. Բաղրամյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Եսայան